ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03

«ԲԵՐԴԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-ի ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԲԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/02 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ

ք. Բերդ

Ա. Մանուկյան 25

«15» մարտի 2019 թ.

ժամը 09:30

Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Գալստյանը,

Անդամներ՝ Մ.Բաբայանը, Ս. Պապոյանը, Ա. Թումանյանը, Ա. Մելիքյանը,

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Սողոմոնյանը:

Հիմք ընդունելով «Բերդի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ԲԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/02 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2019 թվականի մարտի 06-ին կայացած «դեղորայքի» ձեռքբերման մրցույթի հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցների վերաբերյալ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետև Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը, Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներից ստացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը (առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը)՝ գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. «Բերդի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպված ԲԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/02 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով մրցույթում ընտրված մասնակից հայտարարել.
   1,2,3,4,5 և 6 չափաբաժինների գծով «Արմենֆարմ» ՍՊԸ-ին,
   9, 10 և 78 չափաբաժինների գծով «Թեոֆարմա» ՍՊԸ-ին:
   Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0:
2. «Ֆարմպրոեկտ» ՍՊԸ հայտը մերժել, պատրաստել փաթեթ՝ ֆինանսների նախարարություն ուղարկելու համար՝ Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն Ցուցակում ընդգրկելու նպատակով: Եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվություն ներկայացնի մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը, ապա Կարգի 44-րդ կետով նախատեսված տվյալները չներկայացնել լիազորված մարմնին, հակառակ դեպքում՝ ներկայացնել:
   79-րդ չափաբաժնի գծով ընթացակարգը հայտարարել չկայացած: Հրապարակել ընթացակարգի չկայացման մասին հայտարարությունը:
   Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0:
3. Նշված ընկերությունների հետ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը տեղադրել www.procurement.am կայքում և www.armeps.am համակարգով ուղարկել ընթացակարգի մասնակիցներին՝ անգործության ժամկետը չի սահմանվում՝ համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի:
4. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը գումարել պայմանագրի կնքման օրը:
5. Սույն արձանագրության պատճենը տրամադրել ԲԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/02 ծածկագրով ընթացակարգի մասնակիցներին:

Նիստին ներկա գտնվող հանձնաժողովի անդամների անուններն ու ազգանունները

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Գալստյան _____

Հանձնաժողովի անդամներ՝ Մ. Բաբայան _____

Ս. Պապոյան _____

Ա. Թումանյան _____

Ա. Մելիքյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Սողոմոնյան _____